## ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

## «ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՄԵՐԺԵԼՈՒ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԵՆԹԱԿԱ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՀԱՇՎԱՐԿՎՈՂ՝ ՖԻԼՄԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԱՆՄԻՋԱԿԱՆՈՐԵՆ ԿԱՊՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԵՆԹԱԿԱ ԴՐԱՄԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՀԱՇՎԱՐԿԵԼՈՒ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| հ/հ | Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը | Առարկության, առաջարկության բովանդակությունը | Եզրակացություն | Կատարված փոփոխությունը |
|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 |
| 1 | Սերգեյ Հովսեփյան<br>16.02.2024 23:58:24 | Համամիտ եմ Academy Films-ի հետ: Անհրաժեշտ է հստակեցնել տոկոսային հատվածը ու վերանայել/մանրամասնել ծառայությունների ցուցակը: Տոկոսները պետք է հաստատվեն Կառավարության կողմից ու հստակ լինեն արտաքին գործընկերներին, այլ ոչ թե հաստատվեն ազգային մարմնի կողմից: Սա տնտեսական կարգ է և կարևոր է Էկոնոմիկայի նախարարության մասնակցությունը: Բացի այդ իրենք են զբաղվում արտահանման խրախուսումով: Տվյալ դեպքում սա ծառայությունների արտահանման խրախուսում է: | Շնորհակալություն առաջարկության համար: Այն կդիտարկվի շրջանառվող փաստաթուղթը ամփոփելիս | |
| 2 | Academy Films<br>08.02.2024 12:14:39 | Խնդրում ենք ավելի հատսկեցնել ներդրումների վերադարձի տոկոսադրույքը հաշվարկելու կարգը, մանրամասները: Այս պահին չի հասկացվում: Պետք է բացառել, որպիսի այդ հարցը մնա որևիցե պաշտոնյայի հայեցողությանը, այլ՝ պետք է լինի հստակ, մանրամասն ձևակերպված: | Շնորհակալություն: Առաջարկը ընդունված է: Լրամշակումը կկատարվի: | |